

թիւ 23863
Փետրուար 7, 1973

Հոգեշնորհ
Տ. Փիրայր Կրդ. Քաշմեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Թորոնթօ, Գանատա.

Սիրելի Հայր Փիրայր,

Ստացած ենք 1973 Փետրուար 1 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 28ին զուամարուած 2եր
Ժիական Փողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի հինգ անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական Փողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած գանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Իւնաթի
անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց ատենապետներու
անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշ-
տօնակիցներուն յաջող եւ արդիւնաբեր գործունէութեան տարի մը, ի ցիւն ծառու-
թիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ
ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԷԼԳԻՍԿՈՎՈՍ
Առաջնորդ

Վարդեա Սոմաճեան
Ժան Գալայճեան
Լեւոն Եազրճեան
Փիրայր Փափազեան
Անդրանիկ Քահմիզեան